


Պ. Պ. ՎԻԼԿՈՎ

ԿՐԵՇՈՂԵՐ

ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՆՐԱՆՑ ԴԵՄ

Թարգմ. Ա. ԶՈՒՐԱԲՅԱՆ



ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՑԱՆ ՅԵՐԿՐԱՑԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՏՈՎ - ԴԱՆ

1934

30 JUL 2010

ԿՐԾՈՂՆԵՐ
ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՆՐԱՆՑ ԴԵՄ



ԱՌԱՋԱԲԱՆ

Վնասատուների գեմ պայքարը, վորո գյուղատնտեսության մեջ պայքարի հիմնական բաժինն ե կորուստների գեմ, կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման և ունկոր կոլտնտեսային կյանքի պայքարի ֆրոնտներում բռնում ե խոշոր և պատասխանատու տեղ:

Վնասատուների տարածումը. խոշոր չափով կապված եր այն բանի հետ, վոր դասակարգակին թշնամիները. կուլակությունը, վոր թեպետ և ջախջախված ե, բայց վերջնականապես չի վոչնչացած, մեծ չափով ոժանդակում եր դրան: Բոլոր միջոցառումների անցկացումը, վորոնք հանդիսանում են պայքարի միջոցներ վնասատուների գեմ, հանդիպում եր ջախջախված կուլակության մնացորդների կողմից կատաղի գիմադրության:

Մեր յերկրամասում տնտեսական-քաղաքական կամպանիաների կատարման և ամենազլավավոր ագրոտեխնիկական պահանջների չկատարելու վերաբերմամբ (հողի վատ մշակում, ձգձգված ցանքս, վոչ ժամանակին բերքահավաք և այլն) կուլակության կողմից կազմակերպված ստրոտաժի հետևանքով, վնասատուների տարածումը խոշոր չափեր եր ստացել և հասցրել եր բերքի զգալի ցածրացման: Այդ պատճառով վնասատուների գեմ կոփվը մեզանում ընդունում ե առանձնապես սուր խնդրի բնույթ, վորի հաջող լուծումը կպահպանի մեզ համար տասնյակ և հարյուրավոր միլիոն փութ հատիկային շարքամշակային և բոստանային կուլտուրաներ:

18009

12 AUG 1913 կովի հաջողությունը կախված է նրանից, թե վորչափ
կոլտնտեսությունների տեղական կուսկազմակերպությունների
և կոլտնտեսականների կողմից կայտնաբերվի գասակարգային
զգոնություն, մարտական զորահավաքություն և ակտիվություն
վնասատուների դեմ քիմիական և ուրիշ միջոցներով կռվելու
տեխնիկայի տերապետման և նշանակված բոլոր միջոցառում-
ների ժամանակին կատարելու մեջ:

Գյուղատնտեսության վնասատուների մեջ առանձնապես կա-
րենու դեր են կատարում կրծողները:

Վորպեսզի ավելի հզոր կերպով կռվենք այդ վնասատուների
դեմ, պետք է իմանալ՝ ինչպես և վորտեղ են ապրում նրանք,
ինչպիսի վնաս են տալիս, ինչու մի քանի տարիներ յերեան են
դալիս մեծ քանակությամբ և այն:

Կրծողների և նրանց դեմ կռվի միջոցների հետ այսպիսի
ծանոթությունը Ազով-Սևվծովյան յերկրամասի պայմաններում
տալիս է հենց այս բըռշյուրը:

ՎՆԱՍԱԿԱՐ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԴԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բոլոր կրծողների հատկանիշը, վորն այս կենդանիներին տար-
բերում է մյուսներից, հանդիսանում է նրանց առանձնատերի կադ-
մության առանձնահատկությունը: Այս առանձնահատկությունը
կայանում է նրանում, վոր առջևի վերին և ստորին ատամները,
կրծողների կարիչներն զգալի կեր-
պով ավելի յերկար են հետևի սեղա-
նատամներից և մի քանի տեսակ-
ներին խիստ գեղի առաջ են դուրս
ընկած: Սեղանատամները, ընդհակա-
ռակը, ցած պսակ ունեն և իրանց
մակերեսույթի ծամող յերեսի վրա
ծածկված են ընդլայնական ծալքերով: Կարիչ և սեղանատամների
արանքում բոլոր կրծողներն ունեն անատամ տարածություն
(նկ. 1):



Նկ. 1.

Կրծողների թվին պատկանում են նապաստակները, ճագար-
ները, առնեաները, պոնտական և գերմանիկ մկները, մկները,
ճագարամկները և մի շարք ուրիշ ավելի քիչ հայտնի կենդա-
նիներ: Քիչ փորձված մարդիկ հաճախ շփոթում են անային
մկների հետ արտաքինով նրանց հիշեցնող սրնչակի (ՅԵ-
ՐՈՒԿԱ) հետ և պատահած դեպքում սպանում են նրան: Այն-
ինչ սրնչակը, գլխավորապես միջատներով, վորդերով և մկների
ճագերով կերակրվելով, հիմնականում ոգտակար կենդանի յէ
հանդիսանում և արժանի յէ վոչ թե վոչնչացման, այլ պահ-
պանման: Սրնչակին մկներից աարբերելը դժվար չէ—նրա գունչը
սուր, կնճթաձև, յերկարացած է, մորթը կարծ-թավշանման, վե-
րեկից ներկված է և գույնով, ներքեկից՝ սպիտակ:



Կ 3 Հ 7 9 - 63

կրծողները գլխավորապես կերակրվում են խառն կերով և արդ պատճառով ել նրանց վնասը շատ զանազանակերպ ուղղություններով եւ արտահայտվում:

Ամենամեծ վնասը նրանք հասցնում են կուլտուրական բուսականությանը, տնտեսական մթերքների պաշարները և անային գործածության առարկաները վոչչացնելով:

Այս վնասները, փոր կրծողները հասցնում են ամեն տարի մեր գյուղատնտեսությանը, շատ խոշոր են և կազմում են հարյուրավոր միլիոն ըուբլիներ:

Ավելի շատ վնասակար կրծողների թվին, փորնք ապրում են մեր յերկրամասի սահմաններում, պատկանում են դաշտային մկները, պոնտական և գերմանիկ մկները:

ԴԱՇԱՅԻՆ ՍԿՆԵՐ

Դաշտային մկները բոլորին հայտնի կրծողներ են. նրանք լինում են զանազան տեսակ: Նրանցից վոմանք յերկարապոչ են, վոմանք ել ունեն կարճ պոչ, խոկ մյուսները համարյա անպաչ են: Մկները զանազան տեսակ են նույնպես և իրանց գույնով— նրանց մեջ պատահում են մոխրագույն, շիկագույն, մեջքի յեր-



Նկ. 2.

կայնությամբ սև շերտով և այլն: Այս կրծողները վճռականապես ամեն տեղ են պատահում, վորտեղ՝ միայն վորեն բուսականություն կամ նրանց համար հարմար անունում կա (նկ. № 2):

Ազով-Սևծովյան յերկրամասում 1933 թվի ավաների համեմատ, այս վնասառուների բոնած տարածությունը կազմում էր 2.998.900 հեկտ: Մկները մեծ մասամբ ապրում են ընտանիքներով վոչ խոր բներում, վորոնք մի քանի դուրս գալու անցքեր ունեն: Սրանք խիստ շատակներ կենդանիներ են: Նրանցից շատերը ձմեռը հավաքում են ձմեռվա համար սննդի մեծ պաշար: Իբրև այդպիսին՝ սովորաբար ծառայում են հացահատիկները: Ամառը ցանքսերում նրանք վոչչացնում են բույսերի ցողունները կամ հասկերի մեջ լցվող հատիկները, իսկ ավելի ուշ վնասում են՝ մանելով չկալսված հացահատիկների դեգերի մեջ կամ հատիկների պահեստարանները:

Նրանք ձմբաննջին չեն դիմում և մնադի պակասության դեպքում ապրում են ի հաշիվ ամառվա պատրաստած մնադի, կամ թե ձյան տակով անցքեր բաց անելով, սնվում են աշնանացան և ուրիշ կուլտուրական բույսերի ծիլերով:

Տարվա տաք ժամանակը մկները մի քանի սերունդ են տալիս, բերելով ամեն անգամ 4—8 ձագեր: Յերկրամասի հարավային ուայսններում մի քանի տեսակները մինչև անգամ ամբողջ տարին են բազմանում, բերելով համարյա յուրաքանչյուր ամիս ձագեր: Այսպիսի բազմացման դեպքում մեկ եգի տարեկան սերունդը կարող է համել մինչև 170 հատի:

Առանձին տարիներում, նրանց թիվը համեմատած սովորական տարիների հետ տառանձնապես շատ եւ աճում: Այսպես, որինակ, նախկին Սալսկի գավառում ձմեռը 1927—31 թվականներին գեղեցի մեջ մկները պատահում եյին մի մի հատ, խոկ 1932—33 թվականներին մի քանի գեղեցերում նրանք հաշվում եյին գեղի 1 խորանարդ մետրի մեջ մինչև 70 հատ: Սովորաբար 1 հեկտարի վրա դաշտամկների բները հաշվում եյին միավորներով, իսկ «մկների արշավի» տարիներին նրանց բների թիվը համում եւ յերբեմն մինչև 30.000-ի:

Մկների այսպիսի սուր կերպով գաշտերում շատացման ժամանակ սովորաբար ազդաբնակության մեջ առաջ և գալիս յենթադրություն, վոր մկները վորեն տեղից են յեկել, մի տեղից դադեկ են: Այս յեղակացությունը ուղիղ չե: Այսպիսի յերեգույթի ուսումնամասիրությունը ցույց տվեց, վոր բոլոր մկները

տեղական են: Բազմանում են իրանց բռնած դաշտերում: Նրանց համար բարենպաստ պայմաններ ստեղծվելու հետևանքով և ամենից առաջ սննդի առատ լինելու պատճառով, փորն ապահովագրում է նրանց ձմեռվա ընթացքում մեռնելուց, այդ նրանց հնարավորություն և տալիս մեծ քանակությամբ բազմանալու, ինչպես 1932—34 թվականին, յերբ աղբոտեխնիկական միջոցառումների գեմ կուլակային սարոտաժի (ցանքսրուշացում, վատ բերքահավաքը, չվարած տեղեր, մոլախոտերի զարգացում) հետևանքով ստեղծվեցին բացառիկ բարենպաստ պայմաններ միների բազմացման համար:

Յուրաքանչյուր կոլանտեսություն և խորհուտեսություն ամենից առաջ պարական է դիմել մի շարք այնպիսի անտեսական-ագրոտեխնիկական միջոցառումների պլանալին կիրառման, վորոնք իրանց հիմքում պարունակեն կրծողներին սննդից և ապաստանից զրկելու իննդիրը:

Կուլի միջոցները: Վերոհիշյալ նպատակին համեմ համար, իրեն հիմնական ագրոտեխնիկական միջոցառումներ, վորոնք արգելում են միներին մասսաներով բաղմանալ, հանդիսանում են հետեւալները.

1. Հնարավորության չափ շուտափույթ և մաքուր բերքահավաքը:

2. Հավաքած բերքը միների համար անմատչելի շինությունների մեջ պահելը:

3. Կալսի ձգձգման դեպքում հնձված հացահատիկների պահելը մաքրած և չորս կողմից հատուկ փոսով կտրած հողամասերի վրա դեղերի մեջ: Այդպիսի փոսերը պետք է անել ուղղահայաց և հարթ պատերով 0,5 մետր լայնությամբ և 0,75 մետր խորությամբ:

Վորպեսզի միներն այդպիսի փոսից դուրս գալ չկարողանան, նրա հատակի վրա յուրաքանչյուր 5—10 մետր հեռավորության վրա փորում են փոսեր—հորեր 0,5 մետր խորությամբ, վորոնց հատակին դնում են հատիկից կամ հացից պատրաստած թունավոր կեր:

4. Ամբողջ տարփա ընթացքում մոլախոտերի ինսամքով վոչնչացումը:

5. Դաշտերում հնձվելուց հետո մնացածները, իսկ բակերում գյուղատնտեսական արտադրության թափթփուկները և ընդհանրապես ամեն տեսակի աղբը վոչնչացնելը:

6. Աշնանավարը, վորն աշնանը քանդում է կրծողների բները:

Մկների դեմ կովի վոչնչացուցիչ միջոցներից լավագույն հետևանք տալիս են հրապուրիչ կերերը. Այդպիսի հրապուրիչ կերերի համար իրեն նյութ կարող է ծառայել յեփած հացը, կամ յեղիպատացորենի ծափարը, ցորենի և հաճարի հատիկը, իսկ իրեն բույս՝ գլխավորապես արսենաթթվային նատրիումը:

Հացը մանրացվում է մասը կտորների (բալի մեծությամբ), և հետո թրջում են թունավոր լուծույթով: Վերջինս պատրաստվում է պատրաստի դեղատոմսով՝ թույնի 1 մասը ջրի 25 մասի հարաբերությամբ, ըստ վորում, թույնի դառն համը վոչնչացնելու համար ավելացնում են 1 մաս շաքար կամ շարապ:

Մեծ քանակությամբ հրապուրիչ կեր պատրաստելը հարմար և մաղերի ողնությամբ, վորոնք հացի կտորներով ընկղմում են լուծույթի մեջ:

Յերբ հացը հեղուկով ծծվեց, մաղերը հանում և լուծույթի ավելորդ մասը թողնում են վոր հոսի և, կտորները թեթև կերպով չորացնելուց հետո, անցնում են աշխատանքի:

Այսպիսի ձեռվ թունավորված հացի կտորները մի մի հատ դրվում են յուրաքանչյուր բնի մեջ, կամ հատուկ փորած փոսերի հատակին:

Հրապուրիչ կերը հատիկից կարելի յե պատրաստել յերկու յեղանակով:

1. Պատրաստում են արսենաթթվային նատրիումի թույնի 1 մասը ջրի 30 մասի հարաբերությամբ լուծույթ: Այս լուծույթի մեջ հատիկները յեփում են 2—3 ժամվա ընթացքում, արսինքն, մինչև վոր հատիկը կակուղ դառնա: Յեփելն արագացնելու համար թույլատրվում է նախորոք հատիկը թրջել ջրի մեջ 10—12 ժամվա ընթացքում, վորից հետո յեփելը կրծատվում է մինչև 40—50 րոպե:

2. Պատրաստում են արսենաթթվային նատրիումի թույնի 1 մասը ջրի 16 մասի հարաբերությամբ և այս լուծույթի մեջ թրջում են հատիկը մի որվա ընթացքում։

Դրանից հետո, յերբ արդեն հատիկը պատրաստ ե թե առաջին և թե յերկրորդ գեղքում, նախապես նրան պետք է չորացնել և հետո 1—2 գրամ բների մեջ դնել։

Մկների գեմ անհրաժեշտ ե կոփի մղել սիստեմատիկ կերպով, առանց թողնելու գործը մինչև այն ժամանակ, յերբ կը ծողները բազմացել են մասսաներով։

Աշնանը, հենց վոր սկսում են ցրաերը, յերբ մկները դաշտեցից սկսում են քոչել գեղերը, պահեստարանները, մարդկանց բնակարանները և այլն, խորհուրդ է տրվում կիրառել հարդից պատրաստած հրապուրիչ կուլտեր։

Հարդից յուրաքանչյուր կույտի համար մոտավորապես վերցվում է 30 կգ քանակությամբ։ Յուրաքանչյուր այդպիսի կույտի տակ անմիջապես գետնի վրա լցնում են դարման (մինչև 3 կգ) խառնած 500 գ թունավոր հատիկների հետ։ Մկների ըիչ քանակության դեպքում այդպիսի կույտեր դնում են յուրաքանչյուր հեկտարի վրա 1—2 հատ հաշվով։ Մկներն ուրիշ ավելի հարմար ձմերելու տեղի բացակայության դեպքում հավաքվում են այդ հարդի կույտերի մեջ, գտնում են հրապուրիչ կերը և, ուտելով նրան, թունավորվում են։ Թունավորված հրապուրիչ կերը հրապուրիչ կույտեր դնելու ժամանակ, անհրաժեշտ ե աշալը ջությամբ հետեւել և թույլ չտալ ընտանի կենդանիներին և թոչուններին նրանց մոտենալ, վորովհետեւ վերջիններս կարող են կույտերը քրքրել և ուտել թունավոր հրապուրիչ կերը, վորից հետո անխուսափելի յե թունավորումը։ Անհրաժեշտության անցնելուց հետո, այս հրապուրիչ կույտերն անպատճառ պետք է այրել և մնացած հրապուրիչ կերը հողով ծածկել։

Մկները գեղերում յերեալու գեղքում, թունավորումը կատարում են հրապուրիչ կերը անցքեր ունեցող փոքր արկղների մեջ տեղափորելով։ Վորպեսզի հրապուրիչ կերն ավելի դրավիչ լինի, խորհուրդ է տրվում համեմել նրան շաքարով կամ արևածաղկի յուղով։

Մկների գեմ տարվող պայքարում եյական ոգուած ե տալիս մկներին վոչնչացնող ոգտակար կենդանիների պահպանությունը։ Այդպիսի կենդանիների թվին պատկանում են՝ բաց գույնի ժանտաքիսը, աքիսը, բուն, ձուռակը և մյուսները։

Հարկավոր ե հիշել, վոր շատակեր և շարժուն մկնանման կրծողների գեմ կոփիվը լավագույն հետևանքների համառում ե պահանային կարգով և ամբողջ վարակված տարածության վրա միաժամանակ։

ՊՈՆՏԱԿԱՆ ՄԿՆԵՐ

Ազով-Սևծովյան յերկրամասի սահմաններում ապրում են պոնտական մկների յերկու ցեղը — բծավոր և գորշ (նկ. 3)։

Բծավոր պոնտական մուկը տարածված է յերկրամասի հյուսիս-արևմտյան մասում, նրանից դեպի հարավ կենտրոնական և արևելյան ուայոններում ապրում ե գորշը։



Նկ. 3.

Յերկրամասում պոնտական մկներով վարակված տարածությունը 1933 թվի տվյալների համաձայն կազմում է 4,445.570 հեկտար, յուրաքանչյուր հեկտարի վրա 17 բուն միջին խտությամբ։ Պոնտական մկները, բնակվելով կուլտուրական հողամասերի սահմաններում, առանձնապես մեծ վսաս են հասցնում

հացահասաիկային ցանքսերին: Գարնանը՝ նրանք վոչնչացնում են ցանված սերմերը, ծիլերը կամ մատղաշ բույսերը, իսկ ամառը՝ հասունացող հատիկները: Հաշված ե, վոր յուրաքանչյուր պրնտական մուկ ամառվա ընթացքում դաշտերում վրչնչացնում ե միջին թվով 4 կգ հատիկ: Իսկ խոսահնձի և արտատեղի նշանակություն ունեցող տարածությունների վրա բնակվելով, նրանք փչացնում են արոտը և արգելք են հանդիսանում մեր խորհնտեսություններին և կոլանտեսություններին բարձր վորակի կերամթերք պատրաստելու հանդեպ:

Բացի այս բոլորից, մի քանի տեղերում պրնտական մկները ֆնասում են նրանով, վոր վատացնում են հողի հատկությունները: Նրանք իրանց բունը շինելու ժամանակ գետնի յերեսն են հանում բույսերի զարգացման համար սակավարժեք յենթահողի աղախառն կամ կավային շերաբ:

Վոչ պակաս կարենոր նշանակություն ունեն նրանք, նաև իրեն ժամանակա կրողներ և տարածողներ:

Կենսակերպը: Տարվա ցուրտ յեղանակին, սկսած ամառվա վերջից մինչև գարնան առաջին տաք որերը, այսինքն՝ 7 ամիս, պրնտական մկները քնում են իրանց խոր բներում: Այդ ժամանակ նրանք ապրում են կաշվի տակ գտնված ճարպի հաշվին, վորն առաջանում ե նրանց մեջ ամառը:

Կանուխ գարնան, հետո վոր ձյունը հալվում է դաշտերից և գետինը թեթևակի չորանում ե, մարտի մեջ կամ ապրիլի ըսկզբին, պրնտական մուկը զարթնում է և գուրս և գալիս:

Դրանից հետո շուտով պրնտական մկները զուգավորվում են և մեկ ամսից հետո բերում են միջին թվով 8 հատ մերկ և կույր մկնիկներ: Մատաղ սերունդն ապրում է մի ամիս շարունակ մի բնի մեջ մոր հետ, հետո, ցրվում և ապրում են ինքնուրույն կերպով: Մինչ աշուն մկնիկները համառ են լիակատար զարգացման, իսկ հետևյալ գարնան իրանց հերթին անցնում են բազմացման:

Իրանց բնակության համար պրնտական մկներն ընտրում են բաց, տափաստանային բուսականությամբ ծածկված ամուր հողեր: Նրանք զլսավորապես ապրում են չվարված խամ հողամասերում, հանգստի թողած հողերում, անպետք հողերում, ճա-

նապարհների կողքերում, ձորերի լանջերին և միայն իբրև բացառություն, մշտական մշակման յենթարկված հողերի վրա:

Վերջին հանգամանքը խոսում է այն մասին, թե ինչպիսի առավելություններ են տալիս գյուղատնտեսական արտադրության սոցիալիստական ձևերը վեսասառուների գեմ, ինչպես, որինակ, պրնտական մկների գեմ կոխվ մղելու ասպարիզում:

Ագրոտեխնիկայի մակարդակի հաջորդական բարձրացման, արտադրողական ուժերի զարգացման, անմշակ թողնված խամերի և պառկած հողամասերի մշակության միջոցով, մեծ մասսի վերջով վար անելով, ամենաքիչ թվով սահմաններ և ճանապարհներ թողնելով և մի շարք ուրիշ ագրոմիջոցառումներ իրագործելով, վոչնչացնում են այդ կրծողի բնակության համար հարմար տարածությունները:

Պրնտական մկներն իրանց բնակության տեղերում շինում են 2 տեսակ բներ՝ մշտական և ժամանակավոր: Առաջինը՝ շատ բարդ և խորը, նրանց մեջ պրնտական մուկը շինում է իր համար բուն: Ժամանակավոր բները բնդհակառակը լինում են վոչ խորը մեկ կամ յերկու ծունկ և ծառայում են պրնտական մըկների համար վտանգի ժամանակ իրեն ապաստարան:

Մշտական բներն իրանց կազմությամբ բաժանվում են թեր և ուղիղ: Թեր բների տուաջին ծունկը գետնի մակերևույթից սկսած զնում է թեր ուղղությամբ, յերկրորդինը ուղիղ կամ ուղղաձիգ է:

Մշտական բներն ունենում են մեկ, կամ շատ քիչ դեպքերում՝ 2—3 յիշ:

Զմերելու համար պրնտական մկներն սկսում են թափնվել հուլիս ամսից կեսից հետո, յերբ բափականաչափ ճարպի պաշար են կուտակում: Զմրանինջի թափնվելուց առաջ պրնտական մուկը փակում է վորջի մուտքը հողով, խոկ բնի վերել անցք և բաց անում, վորը չի համառ մակերևույթին: Այս անցքի միջով զարնանը զարթնելուց հետո վորելով նրան մինչև վերջը, դուրս և գալիս:

Պայշտարի միջոցները: Պրնտական մկների ավերիչ գործուսեյությունը և այն վտանգը, վորը ներկայացնում են անմիջապես մարդու կյանքի համար իրեն ժամանակա տարածողներ,

համառորեն պահանջում ե այս բազմաթիվ և բեղմնավոր վնասատուների դեմ պլանային կորիվ մղեր:

Ներկայումս պոնտական մկների դեմ պայքարի ամենաճիշտ միջոցները հանդիսանում են քիմիական միջոցները: Տվյալ կը ծովի վերաբերմամբ նրանք բաժանվում են մի քանի ձևերի, վորոնցից ամենաձեռնտուները համարվում են հետեւալները.

1. Պոնտական մկներին վորջերում քլորպիկրինով հաղեցած քսիչով կամ ավագով թունավորելը:



նկ. 4.

2. Պոնտական մկներին գետնի մակերեսույթի վրա հատիկներից պատրաստած հրապուրիչ կերպով թունավորելը, գործածելով ստրիխնին կամ արսենաթթվային նատրիում:

Քսիչի Ալիջոցով: Խոշոր մոլախոտերի, քոլերի ցողուններից, բարակ ցախից և այլ նյութերից պատրաստում են ձողիկներ, մատիտի հաստությամբ և մինչեւ 50 սմ յերկայնությամբ: Այդպիսի ձողիկի մեկ ծայրին փաթաթվում են բամբակի կամ խըծուծի փոքր կտորներ այսպես, վորպեսզի, որինակ, 1 կգ բարակից կարելի լինի 7000-ից մինչեւ 8000 քսիչ ստանալ: Այդպիսի քսիչները կապում են 50—100-ական հատ փնջերով:

Քլորպիկրինը լցնում են սովորական շների մեջ, վորոնք պետք ե լավ խցաններ ունենան: Բացի զրանից, աշխատանքի համար պահանջում են հարդ, պարկեր և բահեր: Վորջերի թու-

նավորման աշխատանքը կատարվում է կաղմակերպված բրիգադներով, թվով մինչեւ 50 մարդ բրիգադում: Այդպիսի բրիգադների աշխատողների մեջ պարտականությունները բաժանվում են, մոտավորապես, հետեւյալ կերպով:

1 Պատասխանատու ղեկավար (բրիգադիր), 1 աշխատող կայանում, վորին հանձնաբարվում ե աշխատանքի համար նյութեր պատրաստել, 3 աշխատող քսիչներ պատրաստելու համար, 1 ձիապան կառքով թունանյութ, խմելու ջուր և այլն կրելու համար:

Մյուս աշխատողներն անմիջապես կատարում են վորջերի թունավորումը:

Նրանցից կեսն, այսպես կոչված թունավորիչները, վորոնք մի-մի քլորպիկրինով լցրած շիշ և քսիչներ են ստանում, իսկ մացածները՝ ծակ փակողները, վորոնք տանում են մի-մի հարդով լցրած պարկ և բան (նկ. 4):

Թունավորումը կատարելու համար աշխատողները զույգ-զույգ կարգով շղթա յեն կազմում զույգը զույգից 3—5 մետր հեռավորության վրա: Մոտենալով ծակին (վորջի) թունավորիչն ամենից առաջ վորոշում ե՝ բնակություն կամ այնտեղ, թե վոչ:

Այդպիսի վորջի արտաքին նշաններն են՝ վոստայնի բացակայությունը նրա մեջ, թարմ հողի թմբիկ, կղկղանքի և այլնի ներկայությունը:

Իբրև կանոն, թունավորել պետք ե միայն բնակված վորջերը, իսկ յեթե աշխատողն իր անփորձությամբ չի կարող վորոշել վորջի բնույթը, այն ժամանակ, այդպիսի դեպքերում ավելի լավ ե թունավորել բոլոր վորջերն առանց բացառության:


Թեք վորջերի թունավորման ժամանակ, թունավորիչը պետք ե նախապես վորոշի առաջին ծնկի յերկարությունը: Յեթե դուրս ե գալիս, վոր առաջին ծնկի յերկարությունը կարձ և քսիչից, այն ժամանակ անհրաժեշտ ե վորջը քանդել մինչեւ հետեւյալ ծունկը: Այդպիսի նախապատրաստական աշխատանքից հետո անցնում են թունավորմանը:

Այս նպատակով թունավորիչը վերցնում է մի քսիչ, մըտցնում է քլորպիկրինով շնի մեջ 1—3 վարկան և ապա արա-

գությամբ, վորքան կարելի յե խորը, մացնում ե վորջի մեջ: Ծակ փակողն այդ միջոցին պատրաստում ե հարդից պինդ հյուսելը: Քսիչը վորջի մեջ մացնելուց հետո, այդ հարդյա հյուսով փակում և վերկից ել 3—4 բան հողով պինդ ամքացնում են:

Մի զույգ բանվորը միջին վարակման դեպքում, 50 վորջ մի հեկտարի վրա, պետք է թունավորի, իբրև նորմա, 250—300 վորջ սրական:

Թափիող ավագի միջոց: Այս միջոցը կայանում է վորջերը քլորպիկրինով թունավորելու մեջ, վորով թրջում են տափակ




Ակ. 5.

Տափակ ունեցող շահ մեջ սովորական մաքուր ավագ, 1 մաս քլիրպիկրինին 3 մաս ավագի՝ հաշվով վերցրած կշիռը: Այսպիսի ավագը վորջի մեջ մացվում ե Գալ՛կովի գործիքը (Ակ. 5) միջոցով: Այս գործիքն իրանից ներկայացնում ե 50 սմ յերկարության և 12 մմ լայնության խողովակ, վորը պատրաստում են սովորական յերկաթյա թիթեղից: Մի ծայրից 15 սմ հեռավորության վրա խողովակի պատի մեջ յերկարավուն, 5 սմ յերկարության ձեղք: Խողովակի մեջ մացնում են փայտյա միխչ, վորի մի ծայրն ունի կոթ: Այս միխչի մեջ յերկարության ուղղությամբ ձեղքի միջին մասով մեխում են մի փոք-

րիկ մեխ: Դրանից հետո յեթե միխչը մինչև վերջ քաշում են, այն ժամանակ գործիքի վարի ծայրում միխչից ազատ 2,5 սմ յերկարությամբ տեղ կառաջանա: Այդպիսի դրությամբ գործիքը մացնում են շահ մեջ և յերկու — յերեք ցնցումով նրաներքեւ մասով վերցնում են թունավոր ավագը: Այս ձեռփ լարված գործիքը մացվում է ավելի խորը վորջի մեջ և միխչի կոթին՝ ձեռքի ափով թեթև խփելով դուրս և թափում ավագի ամբողջ բաժինը:

Պայքարի այս միջոցը կիրառելու համար, վերջին ժամանակներն առաջարկված է նոր գործիքը — կուլյարենկոյի գործիքը (Ակ. 6): Այս գործիքը վերեսում ուսումնասիրածից տար-



Ակ. 6.

բերվում է նրանով, վոր խողովակի մի ծայրին պինդ կերպով ամքացնում են ռետինե տանձ (սրակիչ), իսկ հակառակ ծայրում, խողովակի ներսում, ծայրից 2,5 սմ հեռավորության վրա ամքացնում են մի միջնապատ (յերկաթյա շրջան) մեջտեղում մինչև 5 մմ լայնությամբ անցքով: Այս գործիքը լրցնում են թունավոր ավագով ճիշտ այնպես, ինչպես և Գալ՛կովի գործիքը: Վորջի ծակի մեջ մացրած գործիքը ձեռքում գտնված տանձի սեղմումով մեծ ուժով դատարկում է ավագը:

Հրապուրիչ կիրերի միջոցը: Իբրև հրապուրիչ կեր գործ ե ածվում կորեկի կամ ցորենի հատիկը: Կորեկից հրապուրիչ կեր պատրաստելու համար, պատրաստում են սարիխնից լուծույթ, 1 կշռամաս թույնին 400 կշռամաս տաք ջուր, որինակ՝ 1 լիտր ջրին անհրաժեշտ է 2,5 գրամ սարիխնից վերցնել: Այս լուծույթի մեջ կորեկը թրջում են 24 ժամվա ընթացքում, չորս շացնում են, և հրապուրիչ կերը պատրաստ է:

Ցորենից հրապուրիչ կեր պատրաստում են արսենաթթվային նատրիումի լուծույթով, վորից վերցնում են 1 կշռամասին 16 կշռամաս, ուրիշ խոսքով՝ 1 լիտր ջրին պետք է վերցնել 60 գրամ թույն: Ինչպես առաջին դեպքում, հատիկը թրջում

Են թույնի լուծույթի մեջ 24 ժամվա ընթացքում և ապա չորացնում:

Հրապուրիչ կերերը լցնում են փոքր պարկերի կամ կաթսայիկների մեջ և բաժանում են աշխատողներին: Վերջիններս բրիգադների բաժանվելով, 25—30 մարդ, աշխատում են բրիգադիրի ղեկավարության տակ:

Աշխատանքը կատարելու համար բրիգադը շարքի յեն կանգնեցնում այնպես, վորպեսզի աշխատողների միջև յեղած տարածությունը 5 մետրից ավելի չլինի:

Մոտենալով վորջին, աշխատողը վոտով մաքրում է վորջի մուտքի մոտ մի փոքր տեղ աղբից չափանոթով, վորը տեղափորում է 4 գրամ հրապուրիչ կեր, լցնում է փոքրիկ կույտի ձևով: Հրապուրիչ կերը վորջի մեջ մացնելու խորհուրդ չի տըրգում, վորովետեւ գիտողություններով սահմանված է, վոր այդ դեպքում աշխատանքի հետևանքն ավելի վատ է ստացվում:

Մեկ բանվորի արտադրողականության նորման այս միջոցով համարվում է 400—500 վորջ որական:

Պոնտական մկների դեմ՝ վերևում նկարազրված բիմիական միջոցներով պայքարը պետք է սկսել վաղ դարունից, ճենց գործունելու հալվում է և գետինը չորանում:

Առանձնապես կարևոր է արև գրությունը հրապուրիչ կերերով աշխատելու գեղքում, վորովետեւ տափաստանային բուսականության ծիւերի յերեալու հետ միասին, պոնտական մրկներն սկսում են գերադասել կանաչ կերը:

Բացի հիշված քիմիական միջոցներից, պակաս կարևոր չեն նաև պոնտական մկների գետ կովելու համար մի քանի մեխանիկական միջոցներ, քրիսակ՝ կրծողներին վորջի մեջ ջրախեղու անելը, թակարդներով վորսալը և այլն: Պետք է նկատել, վոր այս միջոցներով պոնտական մկների գետ կուվ մղելն արգելվում է ժանտախտի կողմից անբարեհաջող ուայսներում:

Բացի դրանից, պոնտական մկների գետ պայքար տանելիս խոշոր նշանակություն ունեն.

1. Ազրոտեխնիկական միջոցառումները — պոնտական մրկներով բնակված հողերի վարելը, սահմանների և ավելորդ ժանապարհների և այլն վոչնչացնելը:

2. Պոնտական մկների կաշվի և ճարպի մթերման կազմակերպությունը Զագորոպուշնինա և մյուս կաղմակերպությունների կողմից, յեթե այս միջոցառումը համաձայնեցրած է քիմիական մշակման պլանի հետ և վերջապես.

3. Մասսայական վոչնչացումից պահպանելն այն կենդանիներին, վորոնք կերակրվում են այս կրծողներով և տուանձնապես պոնտական մկների ամենաչար թշնամուն — տափաստանի ժամանակակիցներ:

ԳԵՐՄԱՆԻԿ ՄԿՆԵՐ

Գերմանիկ մկները հաստ, անշնորհք կրծողներ են, վորոնք համարվում են մինչև 27 սմ յերկարության: Մեծքի յերկարությամբ նրանք ներկված են գեղնավուն-գորշ գույնով, իսկ



նկ. 7.

ներքեից՝ սկս նրանց գունչը վերելից և աչքերի շուրջը կարմրագուն-գորշ այտերի վրա գեղնավուն-սպիտակ բծերով: Յերբեմն պատահում են գերմանիկ մկներ ավելի մուժ գույնի կամ բոլորվին սկ (նկ. 7):

Գերմանիկ մկները պոնտական մկներից ավել քիչ, նույնականությունը և անօգտագործականությունը համապատասխան չեն:

մարյա բողոք տեղերում: Վերջին տարիները նրանք ավելի մեծ քանակությամբ նկատվում են Մերձագովյան ափերի ռայոններում, այսինքն՝ Սլավյանսկի, Պրիմորսկո-Ալյատարսկի, Բրյուշովեցկի, Յեյսկի, Ազովի և Ստարոմինսկի ռայոններում:

Ենոքիվ նրա խիստ շատակերության և ձմեռվա համար անդի մեծ պաշար հավաքելու սովորության, մի քանի տեղերում գերմանիկ մկներն առաջացնում են ցանքսերի մեջ խոշոր ավերածություններ:

Առանձնապես մեծ վնաս են հասցնում նրանք բանջարեղեն և շարքամշակ կուլտուրաների հասունացման և բերքահավաքի ժամանակաշրջանում:

Կենսակերպը: Զմեռը գերմանիկ մկները, պոնտական մկների նման, ընկնում են քնի մեջ, փակելով վորջի մուտքերը հողով:

Սակայն նրանք քնում են ընդհատումներով, ձմեռը մի քանի անգամ զարթնելով նրա համար, վորպեսզի ամառվանից մթերքած կերով կազուրվեն: Գարնանը գերմանիկ մկները յերեփում են գետնի վրա մոտավորապես պոնտական մկների հետ միասին:

Իրանց բնակության համար այս կրծողները, պոնտական մկներից տարբեր, ընտրում են թողնված և գլխավորապես խիտ քոլերով, թփերով ծածկված տեղեր, նմանապես նաև պարտեզներ և բանջարանոցներ:

Նրանք գիշերային կյանք են վարում, ցերեկը վորջի մեջ անցկացնելով: Գերմանիկ մկների վորջը յերկու տեսակ ելինում՝ մշտական և ժամանակավոր: Առաջինները յերբեմն հասնում են մեծ խորության և ունեն թեք գնացող յերկար զլիսափոր մուտք: Յուրաքանչյուր մշտական վորջ սովորաբար ունի 2—3 յելք: Այդպիսի վորջերում եղը 6—18 ձագ երերում: Յերիտասարդ մկները մոր հետ մի վորջի մեջ են ապրում, մինչև վորինքնուրույն կերպով իրանց սննունդը չճարեն: Դրանից հետո նրանք ցրվում են և յուրաքանչյուրն առանձին վորջի մեջ են ապրում:

Պայմանագիրը միջոցները: Դերմանիկ մկների գեմ պայքար են մղում — վորջերը քրորպիկրինով քսիչների ոգնությամբ թունափորելով:

Թունափորման տեխնիկան նույնն է, ինչ վոր պոնտական մկների գեմ պայքարի միջոցներինը:

Սակայն գերմանիկ մկների վորջերի շատ բարդության պատճառով թույնի քանակն անհրաժեշտ է կրկնապատկել (մինչև 3 գ թույն), իսկ քսիչները պետք է դնել միաժամանակ բոլոր մուտքերի մեջ և վորջում:

Բացի դրանից, գերմանիկ մկների գեմ պայքար են մղում նաև մեխանիկական միջոցներով, թակարդներով կամ վորջերից ջրով գուրս հանելով:

Այս միջոցն իր համեմատական եժանությամբ ձեռնտու յեն նրանով, վոր կրծողի արժեքավոր մորթն ե ստացվում:

Վնասատու կրծողների դեմ ճիշտ կազմակերպված, պլանաշափ և ժամանակին անցկացված պայքար՝ կոլտնտեսային լայն մասսաների ներգրավումով, կազմատի մեր դաշտերն այս վնասատուներից և պետության ու աշխատավորության համար կպահպանի միլիոնավոր փութ հացանատիկ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան	1
Վնասակար կրծողների բնդհանուր բնութագիրը	3
Դաշտային մուկ	4
Պոնտական մուկ	9
Գերմանիկ մուկ	17



Ответственный редактор Г. А. ПОТЕНЦ

Технический редактор О. Тер-Давыдов

Сдано в набор 11/II 1934 г.
Издание с-х 115 3693
Статформат №б.-148x210,
Уполкрайлит Б-254

Подписано в печать 17/II 1934 г.
Об'ем 1 $\frac{1}{4}$ печ. лист
Заказ № 823
Тираж 1000

Тип. им. "Стачки 1902 г." АЧКПО Ростов н-Дону.

ՀՀ Ազգային գրադարան



NL0286279

ԳԻՆԸ
Цена 20 կոմ.

18004

5674

Ա 81

Ա 72

На армянском языке

П. П. Вилков

ГРЫЗУНЫ
И БОРЬБА С НИМИ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄՈՒԿՈՎԿՈՎԱՑ ՓՈԴ. № 58
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԵՐԿՈՎԵԼՏՐ)